Ալպյան Անկյունը ստեղծվել է Ալպյան այգիների միության (Alpine Garden Society) ֆինանսական աջակցության շնորհիվ ,,*Երևանի բուսաբանական այգու Էկոէպիկենտրոնում Հայաստանի ֆլորայի տեսակների ex situ պահպանության համար ցուցադրական քարապարտեզի ստեղծում*” դրամաշնորհային ծրագրի շրջանակներում (2021-2022):

Էկոէպիկենտրոնը հանդիսանում է ՀՀ ԳԱԱ Ա. Թախտաջյանի անվան Բուսաբանության ինստիտուտի Հայաստանի ֆլորայի գենետիկական ռեսուրսների պահպանության բաժնի մաս: Հայաստանի ֆլորայի կենդանի հավաքածուն բաց է այցելուների համար: Այն ընդգրկում է բույսերի հարյուրավոր տեսակներ, այդ թվում նաև հազվագյուտ և էնդեմիկ տեսակներ, որոնք ներկայացված են Հայաստանի հիմնական բնակմիջավայրերին համապատասխան ստեղծված մոդելային բիոտոպերում:

http://ecocenter.am

+374 94 445 157

info@ecocenter.am

ԱԼՊՅԱՆ ԱՆԿՅՈՒՆ

Հայաստանի լեռնագագաթների և ժայռային աճելավայրերի բույսերի կենդանի հավաքածու

Ալպյան Անկյան բնակիչները՝ ինչպիսի՞ն են դրանք

● Հայաստանի ֆլորայի գեղեցիկ խոտաբույսեր կամ փոքր թփեր են և դրանց շարքում կան նաև հազվագյուտ և էնդեմիկ տեսակներ

● դիմացկուն են, կարող են գոյատևել -15՛C և ավելի ցածր ջերմաստիճանի դեպքում ինչպես նաև ջերմաստիճանային զգալի տատանումների պայմաններում

Գտի՛ր Ալպյան Անկյունը Երևանի բուսաբանական այգում գտնվող Հայաստանի կենսաբազմազանության տեղեկատվական և կրթական կենտրոնի (Էկոէպիկենտրոնի) ժայռային բուսականության բաժնում:

Քարապարտեզի հետին մասում բացահայտի՛ր ալպյան և ենթալպյան գոտիների տեսակները, իսկ դիմացի մասում վայելիր ավելի ցածրադիր գոտիներում հանդիպող բույսերը:

Ալպյան Անկյան բնակիչները՝ ինչպիսի՞ն են դրանք

● դրանցից շատերը չափազանց նուրբ և զգայուն են և հանդիպում են ալպյան գոտու մարգագետիններում, ժայռերի վրա և քարքարոտ լանջերին՝ մոտ 2700մ ծովի մակարդակից բարձր և ավել բարձրության վրա: Ալպյան Անկյունում այս բույսերի համար համապատասխան պայմաններ ստեղծելը որոշակի ջանքեր է պահանջում:

● մյուսները տարածված են ավելի ցածրադիր գոտիներում և հաճախ բնակվում են ժայռերի, քարացրոնների, քարային փլվածքների վրա: Այս բույսերը կենդանի հավաքածուի կազում գոյատևելու, ծաղկելու և բազմանալու համար հատուկ խնամքի կարիք ունեն: